Հավելված N 2
ՀՀ վարչապետի 2018 թ.
սեպտեմբերի 19 -ի N 1230 - Ն որոշման

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը

Լենա Նանուշյան

2. Զբաղեցրած պաշտոնը

Առողջապահության նախարարի առաջին տեղակալ

3. Գործուղման վայրը և ժամկետները

2022 թ. հուլիսի 28-ից օգոստոսի 3-ը, Մոնրեալ (Կանադա)

4. Հրավիրող կողմը

ՁԻԱՀ-ի դեմ պայքարի միջազգային ընկերություն

5. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)

Միջոցառման հիմնական նպատակն էր քննարկել ազգային և տարածաշրջանային մակարդակներով իրականացվող ՄԻԱՎ վարակի, COVID-19-ի և այլ վարակիչ հիվանդությունների համաճարակների դեմ հակազդման միջոցները, համաճարակաբանության և կանխարգելման ոլորտում գիտության նորագույն ձեռքբերումները, ախտորոշման և բուժման նոր ուղղությունները:

6. Քննարկված թեմաները

Միջոցառման շրջանակներում քննարկվեցին բնակչության համաճարակային բարեկեցության ապահովման, ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, ինչպես նաև այլ վարակիչ հիվանդությունների կանխարգելման և բուժման ընդհանուր մոտեցումները, մշակվեցին առողջապահության բնագավառում ներկա մարտահրավերների և արդիական հարցերի լուծման համատեղ ուղղություններ:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Հանդիպումներ են տեղի ունեցել ինչպես երկկողմ, այնպես էլ բազմակողմ ձևաչափով: Այցի շրջանակում ՀՀ առողջապահության նախարարի առաջին տեղակալ Լենա Նանուշյանը հանդիպում է ունեցել Քվեբեկի հայ բժիշկների ասոցիացիայի անդամների հետ: Քննարկվել են մի շարք ոլորտներում կանադական փորձի ուսումնասիրության և կիրառման շուրջ համագործակցության հնարավորությունները:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

Այցի ընթացքում քննարկվեցին հետագա երկկողմ և բազմակողմ համագործակցության ուղղությունները, պայմանավորվածություն ձեռք բերվեց խորացնել համագործակցությունը մասնակից երկրների միջև:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Միջոցառման մասնակիցները ջանքեր կներդնեն համաժողովի ընթացքում ձեռք բերած գիտելիքները Հայաստանում կիրառելու: Հանդիպումների ընթացքում առաջարկվել է ամրապնդել մասնագետների փոխգործակցությունն ու կապերը:

10. Ստորագրությունը, ամսաթիվը

Recoverable Signature

X

ԼԵՆԱ ՆԱՆՈՒՇՅԱՆ

Signed by: NANUSHYAN LENA 5114750164

2022 թ. օգոստոսի 18